ՎԱՐԴԱՆ ԱՐԱՄԻ ՊԱՐՍԱՄՅԱՆ

Հայ ճանաչված պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, բազմահմուտ մանկավարժ Վ. Ա. Պարսամյանը ծնվել է 1909 թ. Հրազդանի շրջանի Արզական գյուղում, հողագործ գյուղացու ընտանիքում։ Սկզբնական կրթությունը հայրենի գյուղում ստանալուց հետո տեղափոխվում է Երևան և սովորում է Աբովյանի անվան դպրոցում, որն ավարտելուց հետո 1926 թ. ընդունվում և 1931 թ. ավարտում է Երևանի պե-

տական համալսարանի պատմա-լեզվաբանական ֆակուլտետը։ Մայր բուհում ուսումնառության տարիներին նա ունկնդրել է այնպիսի նշանավոր գիտնական-մանկավարժների, ինչպիսիք էին ակադեմիկոսներ Հ. Մանանդյանը, Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, Ա. Տերտերյանը։ Նրանց խորհրդով էլ Վ. Պարսամյանը իր առաջին գիտական քայլերն է կատարում հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության գործում։ Ավարտելով համալսարանը, նա 1938—1943 թթ. աշխատել է Արմֆանում, ապա 1943—1954 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում։

Անխոնջ ու ջանասեր գիտնականի անցած ուղին արգասավոր է եղել։ Մի քանի տասնյակ տարիների ընթացքում նա հայ ժողովրդի պատմության նոր և նորագույն շրջանների գծով հրատարակել է ավելի քան 200 մենագրություններ, դասագրքեր, արխիվային նյութերի ժողովածուներ, գիտական ու գիտահանրամատչելի հոդվածներ և գրքույկներ։

Վ. Ա. Պարսամյանի աշխատությունների մի ստվար մասը նվիրված է հայ-ռուսական հարաբերությունների պատմության տարբեր պրոբլեմներին։ Դեռևս 1940 թ. նա հրատարակեց «Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում» աշխատությունը, որտեղ մանրամասն շարադրելով 1826—1828 թթ. ռուս-պարսկական և 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմների պատմությունը, մասնավորապես, ուշադրություն է դարձրել Երևանի և Նախի-

գեանի խանությունների գրավման հետ կապված բազմաթիվ հարցերին։ 1828—1830 թթ. Պարսկաստանից և Թուրքիայից Թուրքմենչայի և Ադրիանուպոլսի պայմանագրերի հիման վրա Արևելյան Հայաստան տեղափոխված գաղթականների հարցը այդ աշխատության մեջ հատուկ քննության է արժանացել։ Հեղինակն այդ գրքում անդրադառնում է Հայաստանում ցարիզմի գաղութային քաղաքականության հետ կապված հարցերին և իրավացիորեն նշում, որ, չնայած ցարիզմի քաղաքականությանը, այդ միացումը երկու շարյաց փոքրագույնն էր, որը և պատմական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի արևելահայ հատվածի համար, քանի որ նրա անտեսական և կուլտուրական կյանքը դրվեց նոր ճանապարհի վրա։ Աշխատության մեջ ըստ ամենայնի գնահատված են այդ ժամանակաշրջանում գործող հայ մի շարք գործիչների կատարած աշխատանքը։

Ուշագրավ է Վ. Պարսամյանի «Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները» գիրքը (1947), որը և նրա դոկտորական դիսերտացիան էր։ Գրքում գնահատված է Գրիբոյեդովի դերը, արծարծված են այդ տարիների հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը, ռուս գրողի և հումանիստի օգնությունը հայ գաղթականներին և նրա սպանության մանրամասները։ Նշենք նաև, որ հայ-ռուսական հարաբերությունների պատմության ուսումնասիրության մեջ Վ. Պարսամյանը տուրք է ավել ժամանակի տիրող մտայնությանը։

ԳԱ պատմության ինստիտուտում աշխատած տարիներին Վ. Պարսամյանի շանքերով հիմք դրվեց հայ-ռուսական հարաբերությունների վավերագրերի ուսումնասիրման և հրատարակության գործը։ 1952 թ. նրա խմբագրությամբ հրատարակվեց «Армяно-русские отношения» ժողովածուի առաջին հատորը։ Նույն տարում, երբ հանրապետությունում իրարանցում սկսվեց, այսպես կոչված, միասնական հասանքի հարցերի վերաբերյալ, շատ պատմաբանների հետ Վ. Պարսամյանը դարձավ հարվածների թիրախ։

Այնուհետև գիտնականը հրատարակեց «Դեկաբրիստները Հայաստանում» (1959), «Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը» (1978) աշխատությունները։ Վերջինում շատ հակիրճ շարադրված են հայ-ռուսական հարաբերությունների սկզբնավորման պատմությունը, նրա զարգացումը և վերլուծված այդ հարաբերությունների հետ կապված բազմապիսի հարցեր։ «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը» (ռուսերեն՝ 1978) աշխատության մեջ արդեն վերլուծվում են պատմական դեպքերը, տրվում են այդ ժամանակաշրջանի շատ հայ գործիչների գնահատականները։

Երևանի պետական համալսարանում դասախոս և հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ եղած տարիներին բազմաբեղուն մանկավարժը ամբիոնի սփխատողների ուժերով 1963—1970 թթ. ընթացքում մեծ շանքերի գնով հասավ նրան, որ հրատարակվեց հայ ժողովրդի պատմության 4 հատորանոց ուսումնական դասագիրքը։

Վ. Պարսամյանը մեր պատմագիտության մեջ իր արժանի տեղն ունի հայ հասարակական մտքի, հայ ազգային-ազատագրական շարժումների պատմության մասին հրատարակած հոդվածներով և աշխատություններով։ Նա բազմաթիվ հոդվածների հետ հրատարակեց «Հայ ազատագրական շարժումների պատմությունից» (1958), «Հայ ժողովրդի պատմություն 1801—1900» (ռուսերեն՝ 1972) գրքերը, որոնց մեջ դիտնակար, թափանցելով հայ ազգային-ազատագրական շարժումների էության մեջ, ժամանակի ընձեռած հնարավորությունների սահմաններում լուսաբանել է հայ ժողովրդի պատմության նոր և նորագույն շրջանի մի շարք հանգուցային հարցեր, գնահատել ազատագրական շարժումների մասնակից շատ հայրենասերների։ Այդ գրքերում նա միաժամանակ անդրադարձել է Սյունիքի, Զեյթունի, Սասունի և այլ վայրերի ինքնապաշտպանական կռիվների պատմությանն ու տվել այդ դեպքերի և նրա մասնակիցների հակիրճ գնահատականը։

Վ. Պարսամյանը զբաղվել է նաև իր ուսումնասիրած ժամանակաշրջանի հայ հասարակական հուսանքների, հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական հարցերով և հրատարակել ուսումնասիրություններ, որոնք զգալի ներդրում են հայ պատմագիտության մեջ։ Նա ձգտել է լցնալ տրորված ճանապարհներով՝ աշխատել է Հայաստանի, Վրաստանի, Մոսկվայի, Լենինգրադի արխիվներում, հավաքել իր մտահղացումների համար անհրաժեշտ նյութերը և դրանց ու հրապարակի վրա եղած գրականության բաղդատմամբ հրատարակել աշխատություններ։

Վ. Պարսամյանը մասնակցել է Մոսկվայում հրատարակված ԽՍՀՄ պատմության բազմահատորյակի և խորհրդային մեծ հանրագիտարանի վերջին հրատարակության ստեղծման աշխատանքներին, բազմաթիվ հոդվածներով իր ավանդն է ներդրել Հայկական հանրագիտարանի հրատարակության գործում։ Նա գիտական զեկուցումներով հանդես է եկել պատմաբանների հանրապետական և միութենական նստաշրջաններում։

Բազմավաստակ գիտնականը մասնակցել է հայ ժողովրդի պատմության դպրոցական դասագիրք կազմելուն, որն ունեցել է մի շարք հրատարակություններ։ Չորս տասնյակ տարուց ավելի դասախոսական աշխատանք է կատարել հանրապետության բուհերում։ Դասախոսել է Երևանի պետական համալսարանում, Ե. Արովյանի անվան հայկական մանկավարժական և հեռակա մանկավարժական ինստիտուտներում, ղեկավարել է մեծ թվով ասպիրանտների։ Նրա ուսանողներից և ասպիրանտներից շատերը ճանաչված գիտնականներ են, դպրոցի հարգված մանկավարժներ և հասարակական գործիչներ։ Թե՛ ուսանողները և թե՛ ասպիրանտները սիրել ու հարգել են մարդամոտ, հարազատ, երիտասարդներին միշտ սատար կանգնող իրենց ուսուցչին։

Գիտնականը և մանկավարժը հանրապետությունում մեծ աշխատանք է կատարել նաև գիտամանկավարժական կադրեր պատրաստելու գործում. բավական է նշել, որ նա եղել է 125 մասնագետների թեկնածուական և դոկտորական դիսերտացիաների ընդդիմախոս.

Պրոֆ. Վ. Պարսամյանն իր գիտական և մանկավարժական բեղմնավոր գործունեության հետ մեկտեղ ակտիվ մասնակցություն էր ունենում նաև հանրապետության ու Երևան քաղաքի հասարակական և քաղաքական կյանքին։ Բավական է նշել, որ նա երկար տարիներ ղեկավարել է հանրապետության բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության ու լուսավորության նախարարությունների պատմագիտական մեթոդական խորհուրդներ, «Գիտելիք» ընկերության հայկական բաժանմունքի հիմնադիր անդամներից էր և պատմության գիտական խորհրդի նախագահը։

Հայրենիքը բարձր է գնահատել Վ. Պարսամյանի գիտական ու մանկավարժական վաստակը։ Գիտնականը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, 1961 թ. ստացել է գիտության վաստակավոր գործիչի կոչում, իսկ հետագայում՝ Ե. Արովյանի անվան մեդալ։ Այսպիսին է ազնիվ մարդու, գիտության անխոնջ երախտավորի և հմուտ մանկավարժի անցած կյանքի ուղին։

Հ. Մ. Պողոսյան
Պատմական գիտությունների դոկտոր